Սամաթիա։ Կեսարացի Բարուճճի օղլու, եւ ոմն ալեւոր, որ զտեսարակն շուրջ ածեալ 'ի քաղաքին ամբոխ յարուցեալ է, գլխատեցան 'ի Տիքիլի Թաշ, 3 Ամիրայք և 2 Եպիսկոպոսունք հանեալ 'ի բանտէ դատապարտեցան յաքսորս ('ի 19 Սեպտեմբերի)։ անկաւ ահ մեծ 'ի վերայ ազգին Հայոց 'ի Թագաւորեալ քաղաքի անդ, զի ոչ կարէին առնել ինչ, ոչ Պատրիարքն և ոչ իշխանաւորք, զի սիրտ Արքայի ծանրացեալ էր 'ի վերայ նոցա (1820)։

Ցոյնք յափշտակեցին զդերեզմանատեղիս Նեսդորականաց և Վրաց, զորս յառաջագոյն գնեալ էին Հայք յայլազգեաց՝ յանհետանալ նոցին յԵրուսաղէմէ, փոխանորդն Հայոց Եղիա եպիսկոպոս դեգերէր 'ի դրունս այլազգեաց։ Ցոյնք դիմեցին առ Կուսակալն Դամասկոսի Տէրվիշ Փաշայ, և ամենասուն եղեն զազգէն Հայոց թէ՝ քակեալ զնախնի սահմանս դերեզմանատանց, տիրեալ իցեն միոյ մասին դերեզմանատան նոցին, հակառակ դաշանց եւ պայմանացն։ Իսկ Կուսակալն գրեաց առ Դատաւորս Երուսաղէմի, բառնալ զխռովութիւնն, քննել զտեղին և ծանուցանել ինքեան, Եղիա Եպիսկոպոս թէպէտ էառ գիր 'ի Քաղաքապետէն Երուսաղէմի մնալ մասին այնմիկ 'ի ձեռս Հայոց ըստ տրամադրութեան Հէօճճէթի Դատարանի, այլ չեղեւ ինչ օգուտ, զի Ցոյնք տիրեցին տեղւոյն և եղին նոր սահման (1821)։

Իսկ Գաբրիէլ Պատրիարք գրեաց առ Փոխանորդ Մարկոս եպիսկոպոս 'ի Կոստանդինուպոլիս, յանձն առնել ընդ պաշտօն փոխանորդութեան Յակոբ Եպիսկոպոսի Լիւսդրացւոյ, որպէս յորդորեալ էր զնա նախ քան զմեկնիլն յԵրուսաղէմէ, զի գուցէ դադարեսցին Ցոյնք ասէր՝ 'ի չարութեանց իւրեանց, այլ նա ոչ ընկալեալ զայն, դարձոյց յետս զկոնդակն առանց խախտելոյ զկնիք նորին, և գրեաց առ Գաբրիէլ տալ զայն պաշտօն Յարութիւն վարդապետի Եղեսացւոյ, աշակերտի Մարկոս եպիսկոպոսի, որպէս և եղեւ իսկ։ Եւ զկնիք աւուրց ինչ մեկնեցաւ ինքն անտի 'ի քաղաք իւր 'ի Լիւսդրա։ Գաբրիէլ Պատրիարք քանիցս գրով ստիպեաց զնա գալ յԱթոռն, իսկ նա այլ եւ այլ պատճառանօք դեգերէր 'ի կողմանս յայնոսիկ, յերկիւղէ ճանապարհին և 'ի պակասութենէ ծախուց, և Գլխաւորք